

Վարդուհի Պետրոսյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Դիվանագիտական ծառայության և
մասնագիտական հաղորդակցման ամբիոն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ v_petrosyan@ysu.am

DOI: 10.53614/18294952-2025.2-161

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հոդվածի նպատակն է՝ ներկայացնել Ֆրանսիայի լեզվա-քաղաքականությունն այն գրավոր փաստաթղթերի վերլուծության միջոցով, որոնք կարևոր նշանակություն են ունեցել ֆրանսերենի ձևավորման, զարգացման, տարածման և ժամանակակից աշխարհում որպես մրցունակ լեզու հանդես գալու առումով: Բոլոր կենդանի լեզուների նման ֆրանսերենը ևս բախվում է բազմաթիվ մարտահրավերների՝ ժամանակակից աշխարհաքաղաքական և լեզվաքաղաքական իրավիճակով պայմանավորված:

Ներկա ուսումնասիրության հիմքում դրված են ֆրանսիացի միապետերի և ֆրանսիական կառավարության կողմից ընդունված այն կարևոր որոշումները, որոնք դարեր շարունակ ապահովել են ֆրանսերենի դիրքերի ամրապնդումն ամբողջ աշխարհում, մյուս կողմից՝ այն արդի խնդիրների բացահայտումն ու վերլուծությունը, որոնք խոչընդոտում են ֆրանսերենի տարածմանն ու ամրապնդմանը ժամանակակից աշխարհում:

Հոդվածում քննության են առնվում ֆրանսերենի վերաբերյալ գոյություն ունեցող բոլոր կարևորագույն փաստաթղթերը 842թ. ժամանակներից գրված առաջին փաստաթղթից՝ Ստրասբուրգյան դաշնագրից, մինչև 2024թ. Ֆրանսիայի հանրապե-

տության Մշակույթի նախարարության կողմից հրապարակված ֆրանսերենի մասին զեկույցը, որն ամփոփում է ֆրանսերենի խթանման հանրային քաղաքականության ուղղությունները:

Թեմայի վերլուծության համար կիրառվել են համեմատական, համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրության մեթոդները:

Թեմայի հիմնական եզրահանգումն այն է, որ ֆրանսերենը, ունենալով համեստ ծագում, այսինքն՝ լինելով մի լեզու, որը ձևավորվել է ժողովրդական լատիներենի հիմքի վրա, կրելով կելտերենի և ֆրանկերենի ազդեցությունը, դարեր շարունակ ծառայել է որպես դիվանագիտության առաջատար լեզու, այսօր բախվում է բազմաթիվ մարտահրավերների, որոնք ֆրանսիական կառավարությունը փորձում է լուծել տարբեր մեթոդներով և հետևողական լեզվաքաղաքականությամբ:

Հիմնաբառեր. լեզվաքաղաքականություն, հնդեվրոպական լեզվաընտանիք, ժոմանական լեզվախումբ, Ստրասբուրգյան դաշնագիր, Վիլլեր-Կոտրեի հրամանագիր, Ֆրանսիական ակադեմիա, Մոլիերի լեզու:

Ներածություն

Ինչպես հայտնի է, ֆրանսերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ժոմանական լեզվախմբին պատկանող լեզուներից է: Ինչպես բոլոր ժոմանական լեզուները, այնպես էլ ֆրանսերենը սերում է Հռոմեական կայսրության ժողովրդալսոսակցական լատիներենից. այն զարգացել է գալլոռոմանական լեզվի հիմքի վրա և կրել կելտերենի և ֆրանկերենի ազդեցությունը:

Բոլոր լեզուների նման, ֆրանսերենը ևս անցել է զարգացման տարբեր փուլեր, որոնք նշանավորվել են խորհրդանշական բնույթի փաստաթղթերով և պատմական որոշումներով: Ֆրանսիայի լեզվաքաղաքականության ձևավորման և մշակման գործում այդ փաստաթղթերն ունեցել են կարևոր նշանակություն: Այս հոդվածում կանդրադառնանք դրանցից ամենակարևորներին, ինչպես նաև կներկայացնենք այն մարտահրավերները, որոնք այսօր ծառացած են ֆրանսերենի առջև որպես համաշխարհային նշանակության մրցունակ լեզու:

Մեթոդ

Սույն հետազոտությունն իրականացվել է պատմալեզվաբանական և սոցիոլեզվաբանական մոտեցումների համադրությամբ: Կիրառվել է պատմալեզվաբանական և պատմահամեմատական մեթոդ՝ ֆրանսերենի ծագումն ու զարգացման փուլերը բացահայտելու նպատակով: Տեքստաբանական և դիսկուրսային վերլուծության միջոցով ուսումնասիրվել են առանցքային պատմական և իրավական փաստաթղթերը՝ գնահատելով դրանց լեզվաքաղաքական նշանակությունը:

Միաժամանակ կիրառվել է համեմատական-վերլուծական մեթոդ՝ ֆրանսերենի դիրքը այլ լեզուների համատեքստում դիտարկելու համար, ինչպես

նաև սոցիոլեզվաբանական մոտեցում՝ լեզվի արդի գործառնություններն ու մարտահրավերները գնահատելու նպատակով:

Ֆրանսերենի ձևավորումը և լեզվաբաղաբական հիմքերը

Այժմ անդրադառնանք այն կարևոր փաստաթղթերին, որոնք պայմանավորել են ֆրանսերենի զարգացումը և տարածումը, ինչպես նաև նրա հեղինակության ամրապնդումը որպես դիվանագիտության, արվեստի և գիտության կարևորագույն լեզուներից մեկն արդի աշխարհում:

Բոլոր լեզուների ուսումնասիրությունն ըստ էության սկսվում է նրանց «ծննդյան վկայական» հանդիսացող փաստաթղթի ուսումնասիրությամբ: Ամենահին և կարևորագույն փաստաթուղթը, որն ազդարարում է ֆրանսերենի ծնունդը որպես ինքնուրույն լեզու, 842թ. փետրվարի 14-ով թվագրվող Ստրասբուրգյան դաշնագիրն է (Armand Gasté 1888):

814թ. Կառլոս Մեծի մահից հետո նրա կայսրությունը բաժանվեց նրա ժառանգների միջև, ինչն այնուհետև հակամարտություններ առաջացրեց նրա թոռների՝ Կառլ Ճաղատի, Լուի Գերմանացու և Լոթեր I-ի միջև: Կառլ Ճաղատը և Լուի Գերմանացին որոշեցին միավորվել իրենց ավագ եղբոր՝ Լոթերի դեմ. սա դաշնագրի պատմական բովանդակությունն է:

Դաշնագրի տեքստը գրվել է ոչ թե լատիներեն, այլ ռոմաներեն և տյուրեկերեն (ավելի հաճախ օգտագործվում է բարձր գերմաներեն եզրույթը), այսինքն, համապատասխանաբար, ֆրանսերենի և գերմաներենի «մայր» լեզուներով:

Դաշնագրի տեքստը մեզ է հասել մատենագիր Նիթարդի՝ Կարլոս Մեծի թոռան շնորհիվ, ով այն ներառել է «Պատմություններ» աշխատության մեջ:

Այն լեզուն, որով գրված է Ստրասբուրգյան դաշնագիրը, կոչվում է վաղ ռոմաներեն: Այն դեռ հին ֆրանսերենը չէ, այլ վերջինիս սաղմնային վիճակը, որը հաճախ անվանում են «պրոտո-ռոմաներեն» կամ «պրիմիտիվ ռոմաներեն»: Իհարկե, այն ծագում էր ժողովրդական լատիներենից և խոսվում էր այն տարածքներում, որոնք այնուհետև կոչվելու էին Ֆրանսիա: Բնականաբար այդ ժամանակաշրջանում այդ լեզուն դեռ կանոնակարգված չէր և զբաղեցնում էր միջին դիրք ուշ լատիներենի և հին ֆրանսերենի միջև: Հին ֆրանսերենը, որը սկսեց օգտագործվել որպես գրական լեզու 11-րդ դարից, ռոմանական լեզվի զարգացման վաղ փուլն է:

Հնչյունական, ձևաբանական և շարահյուսական առումով այն ավելի կանոնակարգված լեզու էր, քան լատիներենը:

Ֆրանսերենի՝ որպես ինքնուրույն լեզվի ծննդյան վկայական հանդիսացող այս կարևորագույն ձեռագիրն այսօր գտնվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում:

Ֆրանսերենի զարգացման և ամրապնդման համար անչափ կարևոր հանգամանք էր 12-րդ դարում հին ֆրանսերենով գրված պոեզիայի աննախադեպ զարգացումը:

Միջնադարում հին ֆրանսերենով (Ֆրանսիայի հյուսիսային մասում այն

կոչվում էր *langue d'oïl*) գրված բանաստեղծական արվեստը սկսեց աննախադեպ զարգացում ապրել:

Այս առումով փայլուն օրինակ է 13-րդ դարի բանաստեղծ Ռուբըյոֆի բանաստեղծական արվեստը. նա առանձնացավ իր ժամանակի հեղինակներից՝ խախտելով պալատական և այսպես կոչված «գտված պոեզիայի» ավանդույթը *langue d'oïl*-ում:

Ռուբըյոֆը չի վարանում խոսել մարդկային գոյության ողբերգականության մասին, երգել սեփական դժբախտությունների մասին կամ քննադատել իր ժամանակաշրջանի հզորներին:

Նրա բանաստեղծություններն այսօր էլ շարունակում են ոգեշնչել ֆրանսիացի արվեստագետներին, հիշենք Լեո Ֆերեի *Խեղճ Ռուբըյոֆը* երգը, որը յուրօրինակ հարգանքի տուրք է մեծ բանաստեղծի հիշատակին. «Ինչ եղան իմ ընկերները, որոնք այնքան մոտ էին իմ սրտին և այնքան սիրելի, բայց նրանք չափազանց քիչ էին»:

1539թ, օգոստոսին Ֆրանսուա I-ն իր թագավորական նստավայրում ստորագրում է Վիլլեր-Կոտրեի հրամանագիրը: Նրա 110-րդ և 111-րդ հոդվածներով ամրագրվում է, որ թագավորության մեջ արդարադատության և վարչաիրավական նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերը պետք է գրվեն ոչ թե լատիներեն, այլ ֆրանսերեն:

Այս օրենսդրական կարևոր փաստաթուղթը սահմանում է ֆրանսերենի զարգացման առաջին կարևոր ուղենիշը, որը նպաստում է երկրի քաղաքական միավորմանը մեկ ընդհանուր լեզվի՝ ֆրանսերենի շուրջ:

Հաջորդ փաստաթուղթը 1549թ. բանաստեղծ Դյու Բելեի կողմից գրված «Ֆրանսերենի պաշտպանությունը և ներկայացումը» փաստաթուղթն է, որտեղ նա ջերմեռանդորեն հանդես է գալիս ֆրանսերենի դիրքերի ամրապնդման պաշտպանությամբ՝ միաժամանակ իր երախտագիտությունը հայտնելով արվեստների և գրականության պաշտպան Ֆրանսուա I-ին:

Այս փաստաթուղթը համարվում է Պլեյադայի բանաստեղծների «մանիֆեստը», որի մաս էր կազմում նաև տեքստի հեղինակը՝ Յոահիմ դյու Բելեն, մասնավորապես Պիեռ դը Ռոնսարի և Ժան-Անտուան դը Բաիֆի² և մյուսների հետ միասին: Նրանց նպատակն էր՝ հարստացնել և կատարելագործել ֆրանսերենը՝ այն դարձնել նույնքան «ազնիվ և ազդեցիկ, որքան լատիներենը» (Weber 1961):

Տպագրության զարգացման հետ հնարավոր դարձավ նրանց գաղափարների և ֆրանսերենի լայնամասշտաբ տարածումը:

Ֆրանսերենի դիրքերի ամրապնդման և նրա հետագա զարգացման առումով անգնահատելի է Ֆրանսիական ակադեմիայի ստեղծումը 1635թ. կար-

1 *Langue d'oïl*-ը և *langue d'oc*-ը միջնադարյան Ֆրանսիայում խոսվող ժամանակակից լեզուների երկու մեծ խմբերն էին, որոնք այդպես էին կոչվում հիմնականում այդ լեզուներով «այո» ասելու տարբերության պատճառով, բայց նաև այլ, ավելի խորը լեզվական տարբերություններով պայմանավորված, որոնք կապված էին այդ երկու լեզվախմբերի պատմական և աշխարհագրական զարգացման հետ:

2 Յոահիմ դյու Բելեն, Պիեռ դը Ռոնսարը և Ժան-Անտուան դը Բաիֆը 16-րդ դարի ֆրանսիական գրականության վերածննդի գլխավոր գործիչներից էին: Նրանք բոլորը կապված էին «Պլեյադա» գրական խմբակի հետ, որը նպատակ ուներ զարգացնել և վերածնել ֆրանսիական պոեզիան՝ հիմնվելով դասական և ռենեսանսյան մշակույթի վրա:

դինալ Ռիշելյոյի կողմից, որի նպատակն էր մեկ ընդհանուր լեզվի՝ ֆրանսերենի շուրջ համախմբել ֆրանսիացի ժողովրդին:

Այս հաստատության հիմնական առաքելությունն է՝ վերահսկել լեզվի վիճակը և հոգ տանել նրա ձիշտ օգտագործման մասին: Նրա կանոնադրության 24-րդ հոդվածում ասվում է. «Ակադեմիայի հիմնական գործառնությունը լինելու է մեծ հոգածությամբ և ջանասիրությամբ մեր լեզուն որոշակիորեն կանոնակարգել և այն դարձնել մաքուր և պերճախոս, որպեսզի այդ լեզվով հնարավոր լինի զբաղվել արվեստով ու գիտությամբ»:

Հիշենք, որ 17-րդ դարի սկզբին ֆրանսերենի ուղղագրությունը շատ հեռու էր կանոնակարգված լինելուց: Այդ նպատակով Ակադեմիան կանոններ սահմանեց և գրվեց բառարան, որի առաջին օրինակը լույս տեսավ 1694 թվականին:

Ֆրանսերենի համամարդկային բնույթի մասին առաջին անգամ խոսեց Անտուան դը Ռիվարոլը³ 1784թ. իր հայտնի ելույթում: 17-րդ և 18-րդ դարերում ֆրանսերենի օգտագործումը դուրս եկավ թագավորության սահմաններից: Մշակվածության և հղկվածության առումով նմանը չունեցող ֆրանսերենը դարձավ Եվրոպական արքունիքների էլիտաների լեզուն: Ֆրանսերենի համընդհանրական բնույթի մասին Անտուան դը Ռիվարոլն խոսում է իր էսսեում՝ պատասխանելով Բեռլինի ակադեմիայի կողմից կազմակերպված մրցույթի ժամանակ առաջադրված երեք հարցի. «Ինչը ֆրանսերենը դարձրեց համընդհանուր: Ինչո՞ւ է այն արժանի այս բնորոշմանը: Կարելի է ենթադրել, որ ֆրանսերենը կկարողանա դա պահել»:

Անտուան դը Ռիվարոլը հաղթեց մրցույթում, կիսելով առաջին մրցանակը գերմանացի փիլիսոփա Յոհան Գրիստոֆ Շվաբի հետ: Ինչով էր պայմանավորված նման փայլուն հաղթանակը: Գրողը փայլուն կերպով ներկայացնում է ֆրանսերենի պատմությունը և շեշտը դնում ֆրանսերենի առանձնահատկությունների վրա: Հենց այդ ելույթի ժամանակ է նա հիմնավորում այն հանգամանքը, որ ֆրանսերենն առանձնանում է մտքի արտահայտման բացառիկ ձգգրությամբ: «Այն, ինչ հստակ չէ, ֆրանսերեն չէ», – ասում է նա:

Շատ կարևոր էր նաև հայր Գրեգուարի⁴ ծավալած գործունեությունը՝ հոգուտ ֆրանսերեն լեզվի միասնականացման: Այս գաղափարի պաշտպանության նպատակով 1794թ. նա առաջարկեց վերացնել տեղական բարբառները:

Հայր Գրեգուարը չորս տարի շարունակ ուսումնասիրություններ է անցկացնում ամբողջ երկրում, պարզելու համար, թե ֆրանսիացիների քանի տոկոսն է խոսում ազգային լեզվով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հինգ ֆրանսիացիներից միայն մեկն է խոսում ազգային լեզվով,

3 Անտուան դը Ռիվարոլը (1753–1801) ֆրանսիացի գրող, պամֆլետիստ և բարոյախոս էր, որը հայտնի էր իր սուր լեզվով, յուրահատուկ ոճով և 18-րդ դարի վերջի մտավոր և քաղաքական բանավեճերում ունեցած իր դերով: Թեև նա ավելի քիչ հայտնի է, քան իր որոշ ժամանակակիցներ, ինչպիսիք են Վոլտերը կամ Ռուսոն, նա համարվում է 18-րդ դարի մեծ մտավորականներից մեկը:

4 Հայր Գրեգուար (Անրի-Բատիստ Գրեգուար, 1750–1831), կաթոլիկ քահանա, քաղաքական գործիչ և ֆրանսիական հեղափոխության ժամանակ մարդու իրավունքների հավատարիմ պաշտպան: Հայտնի է ստրկության վերացման, կրթության խթանման և հրեաների և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում ունեցած իր ներդրումով:

մյուսները խոսում էին տեղական բարբառներով: Հայր Գրեգուարը գրում է զեկույց «Տարբեր խոսվածքների և բարբառների վերացման և ֆրանսերենի օգտագործման համընդհանրացման անհրաժեշտության և միջոցների մասին»՝ իր գաղափարները հիմնավորելով ազգը միավորելու անհրաժեշտությամբ:

1882թ. տարրական կրթությունը դառնում է պարտադիր բոլորի համար: 1881-82թթ. հանրային կրթության նախարար Ժյուլ Ֆերին երկու օրենք ընդունեց տարրական կրթության մասին՝ այն դարձնելով անվճար, պարտադիր և աշխարհիկ: Դպրոցում ուսուցանվելու էր միայն ֆրանսերեն, որպեսզի այն տարածվեր ամբողջ երկրի տարածքում, ինչպես որ մեկ դար առաջ ցանկացել էր հայր Գրեգուարը: Ֆրանսերենի դիրքերն ամրապնդելու նպատակով ուսանողներին արգելվում էր արտահայտվել տեղական լեզուներով՝ բարբառներով: Միայն 1951թ. հունվարի 11-ի Դեքսոնի⁵ օրենքով թույլատրվեց Ֆրանսիայի բարբառների ուսուցումը:

1992թ. «Մոլիերի լեզուն» ամրագրվում է սահմանադրությամբ: Որքան էլ զարմանալի թվա, միայն 1992 թվականին ֆրանսերենի համընդհանուր կիրառությունը սահմանադրական ուժ ստացավ: Ֆրանսիական հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածով նշվում է, որ «Հանրապետության լեզուն ֆրանսերենն է»:

Այս փոփոխությունը տեղի է ունենում Եվրոպական միության հիմքում ընկած Մասստրիխտի պայմանագրի վավերացման համատեքստում: ՖՀ Ազգային ժողովում քննարկումներ են տեղի ունենում, որոնք անդրադառնում են «Մոլիերի լեզուն» «Շեքսպիրի լեզվից» պաշտպանելու անհրաժեշտությանը:

«Այն ժամանակ, երբ մենք պատրաստվում ենք վավերացնել մի պայմանագիր, որը կսահմանի ազգային արժույթի անհետացումը հօգուտ եվրոպական արժույթի, ազգային լեզվին մեր հավատարմությունն ուժեղ և անհրաժեշտ խորհրդանիշ է», – հայտարարում է պատգամավոր Ալեն Լամասուրը: Ֆրանսիական հանրապետական գաղափարախոսության մեջ լեզուն դիտվում է որպես մշակութային միասնականության հիմք (Մելիքյան, 2014):

1994թ. օգոստոսի 4-ի ֆրանսերենի օգտագործման մասին օրենքը, որը հայտնի է որպես «Տուրոնի⁶ օրենք», օրենսդրական մակարդակում ամրագրում է Սահմանադրության 2-րդ հոդվածով սահմանված սկզբունքն առ այն, որ «Հանրապետության լեզուն ֆրանսերենն է»: Դրանում նշվում է, որ ֆրանսերենը կրթության, աշխատանքի, առևտրի և հանրային ծառայությունների լեզուն է:

Այն չի արգելում այլ լեզուների օգտագործումը, սակայն երաշխավորում է ֆրանսիացիների՝ մեկ ընդհանուր լեզվով արտահայտվելու իրավունքը: Տուրոնի օրենքը նպատակ ուներ պաշտպանել ֆրանսերենը օտար լեզուներ-

5 Տեղական լեզուների և բարբառների ուսուցման մասին 1951թ. հունվարի 11-ի 51-46 օրենքը (ՖՀ Օրենսգիրք, էջ 4832), որը օրենքի հեղինակ Մորիս Դեքսոնի անունով կոչվում է Դեքսոնի օրենք, ֆրանսիական առաջին օրենքն է, որը թույլ է տալիս տեղական որոշ լեզուների՝ բասկերենի, բրետոներենի, կատալոներենի և օքսիտաներենի կամընտրական ուսուցումը:

6 Օրենքը կոչվում է հեղինակի՝ Ֆրանսիայի Մշակույթի և Ֆրանկոֆոնիայի նախկին նախարար Ժակ Տուրոնի անունով:

րի, մասնավորապես անգլերենի աճող ազդեցությունից և երաշխավորել դրա օգտագործումը Ֆրանսիայի հասարակական կյանքում:

Բարբառների պաշտպանությանը և դրանց խրախուսմանը վերաբերող 2021թ. մայիսի 23-ի օրենքը ճանաչում է ֆրանսերենից և բարբառներից բաղկացած լեզվական ժառանգության առկայությունը, որոնք այդպիսով ամրագրվում են որպես մշակութային ժառանգություն:

2024թ. ՖՀ Մշակույթի նախարարության կողմից հրապարակված *Ֆրանսերենի մասին զեկույցն* ամփոփում է ֆրանսերենի և բազմալեզվության խթանման հանրային քաղաքականությունը՝ անդրադառնալով այնպիսի թեմաների, ինչպիսիք են լեզվի հարստացումը, Ֆրանկոֆոնիայի իրազեկումը և թվային նորարարությունը՝ երաշխավորելու համար լեզվական ինքնիշխանությունը տեխնոլոգիական ոլորտում: Այս փաստաթուղթը նպատակ ունի նաև խթանել ֆրանսերենը համաշխարհային մասշտաբով և լայն հանրությանը տեղեկացնել լեզվական արդի խնդիրների մասին: Ֆրանսերենը ներկայումս խոսվում է հինգ մայրցամաքներում և հանդիսանում է ավելի քան 80 պետությունների պաշտոնական կամ մասնակի պաշտոնական լեզու: Այն միջազգային կազմակերպությունների կարևոր աշխատանքային լեզու է՝ ՄԱԿ, Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ, ՅՈՒՆԵՍԿՕ, Կարմիր խաչի միջազգային կոմիտե և այլն: Այս հանգամանքը ֆրանսերենին տալիս է իրավաքաղաքական և դիվանագիտական բարձր կարգավիճակ:

Այժմ դիտարկենք ֆրանսերենի դիրքը այլ լեզուների հետ համեմատության համատեքստում:

Սկսենք անգլերենից: Անգլերենը համարվում է գլոբալիզացիայի գլխավոր լեզուն՝ հատկապես գիտության, տեխնոլոգիաների և միջազգային բիզնեսի ոլորտներում: Սակայն ֆրանսերենը շարունակում է մրցակցել անգլերենի հետ դիվանագիտական և իրավական դաշտում: Պատմականորեն ֆրանսերենը եղել է դիվանագիտության լեզու, և այդ ավանդույթը մինչ օրս արտացոլվում է միջազգային պայմանագրերում և պաշտոնական հաղորդակցություններում:

Գերմաներենը և իսպաներենը կարևոր դեր ունեն Եվրոպայում և աշխարհում, սակայն դրանց ազդեցությունը հիմնականում պայմանավորված է տնտեսությամբ կամ խոսողների քանակով: Ֆրանսերենը, ի տարբերություն դրանց, ունի համադրական առավելություն՝ որպես մշակույթի, քաղաքական մտքի և իրավական դիսկուրսի լեզու: Եվրոպական միությունում ֆրանսերենը շարունակում է մնալ որոշիչ լեզուներից մեկը քաղաքական և վարչական հաղորդակցության մեջ:

Ռուսերենը տարածաշրջանային ազդեցիկ լեզու է՝ հատկապես հետխորհրդային տարածքում: Սակայն ֆրանսերենը ունի ավելի լայն աշխարհագրական և ինստիտուցիոնալ կիրառություն: Պատմականորեն ֆրանսերենը մեծ ազդեցություն է ունեցել ռուսական արխատկրատիայի, դիվանագիտության և մշակույթի վրա, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է նրա միջազգային հեղինակությունը:

Արաբերենը և չինարենը համաշխարհային լեզուներ են՝ մեծ ժողովրդագ-

րական և քաղաքակրթական հիմքով: Այնուամենայնիվ, ֆրանսերենը հաճախ հանդես է գալիս որպես միջնորդ լեզու միջազգային հարթակներում, հատկապես Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում, որտեղ այն կարևոր դեր է խաղում կրթության, վարչարարության և միջազգային համագործակցության ոլորտներում: Ֆրանսերենը, չնայած գլոբալ լեզվական մրցակցության պայմաններին, շարունակում է պահպանել իր յուրահատուկ դիրքը: Ֆրանսիայի լեզվաքաղաքականությունը ուժեղացնում է ֆրանսերենը որպես փափուկ ուժի գործիք՝ միջազգային մեդիայի միջոցով երկրի մշակութային ազդեցությունը առաջ մղելու համար (Martel 2012): Նրա ուժը ոչ այնքան խոսողների թվի մեջ է, որքան քաղաքական, դիվանագիտական, մշակութային և իրավական ազդեցության: Ֆրանսերենը մնում է միջազգային հաղորդակցության հավասարակշռող և արժեքային լեզու՝ կարևոր դերակատար համաշխարհային բազմակլության պահպանման գործում:

Ֆրանսերենի արդի դիրքը և զարգացման մարտահրավերները

Այժմ խոսենք այն մարտահրավերների մասին, որոնց բախվում է ֆրանսերենը մեր օրերում: Իր պատմությամբ և բազմազանությամբ հարուստ ֆրանսերենն իր ուրույն տեղն է գրավում աշխարհում: Ֆրանսերենը մշակույթի, դիվանագիտության և գիտության լեզու է, որով այսօր խոսում է մոտ 396 միլիոն մարդ հինգ մայրցամաքներում: Այնուամենայնիվ, փոփոխվող աշխարհում ֆրանսերենը բախվում է բազմաթիվ մարտահրավերների: Նշենք դրանցից մի քանիսը:

Մրցակցությունը անգլերենի հետ. անգլերենը գերիշխում է միջազգային ոլորտներում՝ ներառյալ տեխնոլոգիաները, գիտությունը, բիզնեսը և ժողովրդական մշակույթը: Սա հաճախ ֆրանսախոս բնակչությանը՝ հատկապես երիտասարդներին, դրդում է նախընտրել անգլերենը: Այս երևույթի վտանգավոր կողմն այն է, որ ֆրանսերենի օգտագործումն ընկավում է որպես պակաս օգտակար՝ որոշակի մասնագիտական և ակադեմիական համատեքստում:

Դիրքերի որոշակի զիջում որոշ ֆրանսախոս երկրներում. աֆրիկյան որոշ երկրներում, որտեղ ֆրանսերենը պաշտոնական կամ երկրորդ լեզու է, տեղական կամ տարածաշրջանային լեզուների աճը և ֆրանսերենով անհավասար ուսուցումը կարող է նվազեցնել վերջինիս կարևորությունը: Մյուս կողմից, օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայում (մասնավորապես Կանադայում), ֆրանսախոս համայնքներում նկատվում է ֆրանսերենի ազդեցության անկում հոգուտ անգլերենի:

Ուսուցման դժվարություններ և լեզվի ընկալում որպես էլիտար հաղորդակցման լեզու. ֆրանսերենի քերականական և ուղղագրական բարդությունը խանգարում է այդ լեզվի ուսուցմանը: Որոշ դեպքերում ֆրանսերենը ընկալվում է որպես էլիտար կամ պակաս մատչելի լեզու, ինչը սահմանափակում է նրա գրավչությունը սովորողների համար:

Որոշ լեզվաբանների կողմից հաճախ հնչում են ֆրանսերենի քերականական և ուղղագրական համակարգերի պարզեցման առաջարկներ, որոնք

մերժվում են Ֆրանսիական ակադեմիայի կողմից:

Գլոբալացում և մշակութային միատարրացում. Ֆրանսիայի լեզվակրթական քաղաքականությունը գլոբալիզացիայի պայմաններում ուղղված է լեզվական ինքնության պահպանմանը՝ կրթական համակարգի միջոցով (Խառատյան, Հ. 2016, էջ 15–25): Գլոբալիզացիայի հետ մեկտեղ ֆրանսերենով ստեղծված մշակութային արտադրանքը (ֆիլմեր, երաժշտություն, գրքեր) երբեմն ներկայացվում է անգլերենով կամ անգլիական բովանդակությամբ, ինչը նվազեցնում է դրա տեսանելիությունը համաշխարհային ասպարեզում: Ֆրանսերենը ֆրանսիական ինքնության ու արժեքների պահպանումում կարևոր գործիք է, ինչի համար լեզվաքաղաքականությունը պետք է համադրի ժամանակակից գլոբալացման մարտահրավերներին (Macron (2016):

Թվայնացում. Ժամանակակից թվային միջավայրը դարձել է լեզվական զարգացման և պահպանման առանցքային գործոն: Գլոբալիզացիան և թվայնացումը միաժամանակ ստեղծում են ինչպես մարտահրավերներ, այնպես էլ նոր հնարավորություններ լեզուների համար (UNESCO, Rapport mondial sur la communication, 1997):

Մասնավորապես, համացանցը, սոցիալական ցանցերը, առցանց կրթական հարթակները և արհեստական բանականության վրա հիմնված գործիքները էական ազդեցություն են ունենում լեզվական գործածության, տարածման և հեղինակության վրա (Martel, 2012):

Թվային միջավայրում գերակշռում են գլոբալ լեզուները, առաջին հերթին՝ անգլերենը, ինչը կարող է վտանգել փոքր կամ սահմանափակ տարածում ունեցող լեզուների կենսունակությունը: Սակայն ֆրանսերենի օրինակը ցույց է տալիս, որ ուժեղ ինստիտուցիոնալ աջակցությունը և մշակութային քաղաքականությունը կարող են հակազդել այդ միտումին: Ֆրանսերենը լայնորեն ներկայացված է թվային հարթակներում՝ պաշտոնական կայքեր, միջազգային կազմակերպությունների պորտալներ, առցանց լրատվամիջոցներ և կրթական ռեսուրսներ (Lochard, 2018, էջ 169): Կադիեն հատկապես նշում է France 24-ի դերը որպես աշխարհում ֆրանսերենի տարածման և Ֆրանսիայի փափուկ ուժի առաջնորդ գործիք (Cadier, 2011):

Թվայնացումը նաև նպաստում է լեզվի պահպանմանը՝ ապահովելով գիտելիքի հասանելիություն և լեզվի ուսուցման նոր մեթոդներ: Ֆրանսերենը ակտիվորեն կիրառվում է առցանց դասընթացներում, թվային բառարաններում, թարգմանչական ծրագրերում և մշակութային բովանդակության տարածման մեջ: Սա թույլ է տալիս լեզվին հարմարվել նոր հաղորդակցական միջավայրին և պահպանել իր գործառական կարևորությունը:

Այսպիսով, գլոբալիզացիան և թվային միջավայրը միանշանակ վտանգ չեն լեզվի համար: Դրանք կարող են ծառայել նաև որպես արդյունավետ գործիք լեզվի պահպանման և զարգացման համար՝ պայմանով, որ իրականացվի նպատակային լեզվական և մշակութային քաղաքականություն:

Ֆրանսերենը, չնայած գլոբալ լեզվական մրցակցության պայմաններին, շարունակում է պահպանել իր յուրահատուկ դիրքը (Lafon, 1994, էջ 403): Նրա ուժը ոչ այնքան խոսողների թվի մեջ է, որքան քաղաքական, դիվանա-

գիտական, մշակութային և իրավական ազդեցության: Ինչպես նշում է Կես-
լերը՝ Ֆրանսիայի լեզվաքաղաքականությունը մի կարևոր բաղադրիչ է նրա
մշակութային դիվանագիտության՝ ֆրանսերենի և նրա մշակութային ար-
ժեքների միջազգային առաջխաղացման ռազմավարության մեջ (Kessler, 2018,
էջ 266): Թվային միջավայրում ֆրանսերենը հանդես է գալիս որպես հար-
մարվող և կենսունակ լեզու, ինչը վկայում է, որ գլոբալիզացիայի պայման-
ներում լեզվի պահպանման հարցը կախված է ոչ միայն թվերից, այլև ռազ-
մավարական մոտեցումից և ինստիտուցիոնալ կամքից:

Ժողովրդագրական խնդիրներ. Թեև ֆրանսախոս աֆրիկյան երկրնե-
րում բնակչության աճը ֆրանսիացիների համար համարվում է կարևոր առա-
վելություն, սակայն այն նաև ներկայացնում է որոշ մարտահրավերներ՝ կապ-
ված կրթության և ֆրանսերենով ռեսուրսների հասանելիության հետ:

Դիվանագիտական ազդեցության թուլացում. պատմականորեն ֆրան-
սերենը դիվանագիտության գերիշխող լեզուն էր: Այսօր այդ ոլորտում ուժե-
րի հարաբերակցությունը փոխվել է հոգուտ անգլերենի: Սակայն ամեն դեպ-
քում Ֆրանսիայի լեզվաքաղաքականությունը պետք է դիտարկել լեզվի էկո-
լոգիայի տեսանկյունից՝ համադրելով պետական ֆրանսերենի պաշտպա-
նությունը և լեզվական բազմազանության պահպանությունը (Calvet, 1999):

Վերոնշյալ մարտահրավերներին դիմակայելու համար Ֆրանսիայի կա-
ռավարության կողմից մշակվում և իրականացվում են ռազմավարական
ծրագրեր, որոնց նպատակն է.

- ամրապնդել ֆրանսերենով իրականացվող կրթությունը, մասնավո-
րապես Աֆրիկայում՝ կայուն արդյունքներ ապահովելու նպատակով:
- խթանել Ֆրանսախոս մշակութային բազմազանությունը՝ աջակցելով
ֆրանսախոս երկրներում գեղարվեստական գրականության և կի-
նոարտադրության զարգացմանը,
- զարգացնել թվայնացումը ֆրանսերենով և ավելացնել նրա հասա-
նելիությունը համաշխարհային լսարանին,
- խթանել լեզվի զարգացումը տնտեսական և գիտական ոլորտներում՝
նրա արդիականությունը ցույց տալու համար և այլն:

Կարծում ենք, ժամանակակից աշխարհում ֆրանսերենի դիրքերի ամ-
րապնդմանն է՛լ ավելի կնպաստեր ֆրանսալեզու բիզնեսների և ստարտափ-
ների խթանումը, միջազգային կազմակերպություններում ֆրանսերենի՝ որ-
պես աշխատանքային լեզվի առավել ակտիվ կիրառումը և ֆրանսերենով
դասավանդվող համալսարանական ծրագրերի ֆինանսավորման ծավալնե-
րի մեծացումը:

Այս լեզվաքաղաքական ուղղությունների հետևողական իրականացումը
կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել ֆրանսերենի դիրքերի ամ-
րապնդման և հարափոփոխ գլոբալիստական աշխարհում նրա մրցունակությ-
ան և հարմարվողականության բարձրացման համար: Ըստ Շիֆմանի՝ Ֆրան-
սիայի լեզվաքաղաքականությունն առանձնանում է պետական ֆրանսերենի
պաշտպանության եւ տարածման վրա մեծ շեշտադրումով, լեզվայնության եւ
հանրապետական ինքնության միասնական կառուցումով, կրթության եւ պե-

տական կառավարման մեջ ֆրանսերենի անփոփոխ դիրքով, այլ լեզուների (օրինակ՝ մերձսահմանային եւ ներգաղթային լեզուների) հանդեպ լիբերալությունից ավելի կոնսերվատիվ մոտեցումով (Schiffman, 1996):

Եզրակացություն

Ինչպես տեսանք, Ֆրանսիան մշտապես իրականացրել է այնպիսի լեզվաքաղաքականություն, որի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝ ֆրանսիացի ժողովրդի համախմբումը մեկ ընդհանուր լեզվի շուրջ, ֆրանսերենի դիրքերի ամրապնդումը, ֆրանսերենի կանոնակարգման, լիարժեք մշակվածության ու հղկվածության ապահովումը, ֆրանսերենի զարգացումն ու տարածումը որպես դիվանագիտության, միջմշակութային հաղորդակցման, գիտության և արվեստի մրցունակ լեզու:

Այդ նպատակով, ֆրանսիյան թագավորության, ֆրանսիական կայսրության և ժամանակակից ֆրանսիական կառավարության ընդունած որոշումներն ու օրենքները քայլ առ քայլ ամրապնդել են ֆրանսերենի դիրքերը՝ հոգ տանելով այն մասին, որ ֆրանսերենը մշտապես համապատասխանի ժամանակակից միջազգային հաղորդակցական լեզվի բոլոր պահանջներին:

Հարկ է նշել, սակայն, որ ֆրանսերենի ժամանակակից մարտահրավերները բազմազան են՝ մրցակցությունը անգլերենի հետ, դիրքերի որոշակի զիջում որոշ ֆրանսախոս երկրներում, ուսուցման դժվարություններ և լեզվի ընկալում որպես էլիտար հաղորդակցման լեզու, գլոբալացում և մշակութային միատարրացում, թվայնացում, ժողովրդագրական խնդիրներ, դիվանագիտական ազդեցության թուլացում և այլն:

Ֆրանսերենի պահպանման քաղաքականությունը դիտարկվում է որպես լեզվական բազմազանության ապահովման պետական և միջպետական ռազմավարություն՝ գլոբալիզացիայի և թվայնացման պայմաններում: Այնուամենայնիվ, գործնական մակարդակում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը պահանջում է քննադատական վերազնիստում:

Չնայած այսօրվա գլոբալացված աշխարհի առաջ բերած մարտահրավերներին՝ ֆրանսերենը շարունակում է զարգանալ և խաղալ կարևոր դեր միջազգային հարաբերություններում, կրթության և գիտության, մշակույթի և թվային տեխնոլոգիաների ոլորտում: Ֆրանսերենն ամրապնդում է իր դիրքերը որպես **կենդանի, դինամիկ և հեռանկարային** լեզու՝ շարունակելով մնալ բազմազանության և երկխոսության գործիք մերօրյա հարափոփոխ աշխարհում:

Օգտագործված գրականության ցանկ

- Խառատյան, Հ. (2016). «Լեզվակրթության մարտահրավերները գլոբալիզացիայի պայմաններում»: *Լեզվաքանական հանդես*, 10(2), 15-25:
- Հովհաննիսյան, Ա. (2018). «Ֆրանսերենը որպես երկրորդ լեզու Հայաստանում»: *ԵՊՀ Հանդես*, 3(4), 45-60:
- Մելիքյան, Գ. (2014). «Լեզուն և մշակույթը ֆրանսիական հանրապետական գաղա-

- փարախոսության մեջ»: *Մշակույթի ուսումնասիրություններ*, 7(1):
- Schiffman, H. F. (1996). *Linguistic Culture and Language Policy*. London: Routledge. (Chapters on French language policy).
- Weber, J.-J., & Horner, K. (2012). *Multilingualism and multiculturalism in France: Current trends*. *European Studies Journal*, 21(4), 203–217.
- Gasté, A. (1888). *Les Serments de Strasbourg, étude historique, critique et philologique*. Paris : F. Vieweg,
- Calvet, L.-J. (1999). *Pour une écologie des langues du monde*. Paris: Plon.
- Cadier, J.-B. «France 24 : un soft power à la française ? », 17 février 2011, <https://www.telos-eu.com/fr/globalisation/emergents/france-24-un-soft-power-a-la-francaise.html>
- Kessler, M.-Ch. «La diplomatie culturelle», in Thierry BALZACQ (éd.), *Manuel de diplomatie*, Paris, Presses de Sciences Po, 2018.
- Lafon, J. «Langue et pouvoir : aux origines de l’“exception culturelle française”», in *Revue historique*, 1994, t. 592, pp. 325–348.
- Lochard, G. *L’information télévisée : Mutations professionnelles et enjeux citoyens*, Paris, Vuibert.
- Macron, E. *Révolution*, 2016, p. 270. Martel, F. «Le soft power à l’âge du tout médiatique», publié le 1er février 2012, <https://www.radiofrance.fr/franceculture/le-soft-power-a-l-age-du-tout-mediatique-9663323>, [consulté le 16.11.2024].
- Organisation Internationale de la Francophonie, *La langue française dans le monde – édition 2019*, Paris, Gallimard, 2019, <https://www.francophonie.org/la-langue-francaise-dans-le-monde2019-en-ligne-en-version-integrale-1067>.
- Site officiel de l’Organisation internationale de la Francophonie (OIF), www.francophonie.org, <https://www.francophonie.org/>
- UNESCO, *Rapport mondial sur la communication. Les médias face aux défis des nouvelles technologies*, 1997.
- Weber, H. *La Pléiade : Anthologie et études critiques* Collection: U (Universitaires), 1961.

Вардун Петросян

Ереванский государственный университет, факультет международных отношений, кафедра дипломатической службы и профессиональной коммуникации, кандидат филологических наук, доцент

Эл. адрес: v_petrosyan@ysu.am

ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ, С КОТОРЫМИ СТОЛКИВАЕТСЯ ФРАНЦУЗСКИЙ ЯЗЫК

Франция всегда проводила языковую политику, основой которой является консолидация французского народа вокруг одного общего языка, укрепление позиций французского языка, обеспечение его регламентации, всестороннего развития и совершенствования. Эта политика также направлена на развитие и распространение французского языка как конкурентоспособного инструмента дипломатии, межкультурного общения, науки и искусства.

С этой целью решения и законы, принятые Франкским королевством, Французской империей и современным французским правительством, шаг за шагом укрепляли позиции французского языка, гарантируя, что он всегда отвечает всем требованиям современного международного коммуникативного стандарта.

Однако следует отметить, что современные вызовы для французского языка разнообразны: конкуренция с английским, потеря позиций в некоторых франкоязычных странах, сложности в обучении, восприятие языка как элитного средства общения, глобализация и культурная гомогенизация, цифровизация, демографические проблемы, ослабление дипломатического влияния и другие.

Несмотря на все эти вызовы, французский язык продолжает развиваться и играть важную роль в международных отношениях, образовании и науке, культуре и цифровых технологиях. Французский язык укрепляет свои позиции как живой, динамичный и перспективный инструмент, оставаясь важным средством культурного разнообразия и диалога в современном меняющемся мире.

Ключевые слова: языковая политика, индоевропейская языковая семья, романская языковая группа, Страсбургские клятвы, Указ Виллер-Котре, Французская академия, язык Мольера.

Varduhi Petrosyan

*Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Diplomatic Service and Communication,
Ph.D. in Philology, Associate Professor
Email: v_petrosyan@ysu.am*

LANGUAGE POLICY OF FRANCE AND THE CONTEMPORARY CHALLENGES FACING THE FRENCH LANGUAGE

The aim of this article is to present France's language policy by analyzing key written documents that have played a pivotal role in the formation, development, dissemination, and establishment of French as a competitive language in the modern world. Like all living languages, French faces numerous challenges arising from the contemporary geopolitical and linguistic landscape.

The article examines the most significant documents related to the French language, starting with the earliest text written in Romance in 842, the *Oaths of Strasbourg*, and culminating in the 2024 report on the French language published by the French Ministry of Culture. This report outlines the key directions of public policy aimed at promoting the use of French.

The research employs comparative, synchronous, and asynchronous methods to analyze the subject.

The main conclusion is that French, originating modestly as a language formed

from vernacular Latin and influenced by Celtic and Frankish, has evolved into the leading language of diplomacy for centuries. Today, however, it faces numerous challenges, which the French government seeks to address through various strategies and a consistent language policy.

Key words: language policy, Indo-European language family, Romance language group, Strasbourg Treaty, Villers-Cotterets Decree, French Academy, Molière's language.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. հունիսի 17-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. սեպտեմբերի 4-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: